կար գրեցաք, այլ իղձ ուրախութեան ոչ ետ ճանաչել նոցա բովանդակապէս զբարս Յունաց, և ոչ կարացին լի ու լի յագեցուցանել զաղահութիւնս զրկողաց. զի Դատաւորք և աւագանիք քաղաքին յաւէտ 'ի դանձս Յունաց հայէին քան յիրաւունս ազգի և հրամանի Արքային. նմին իրի յօրէ յայնմանէ ոչ պահեցան օրէնք և կարգ բաժանորդութեան, այլ անվերջանալի վէճ և խռովութիւն, որ տեւեաց և տեւէ ցարդ, զի այնքան բռնացան Յոյնք 'ի վերայ Հայոց մինչեւ չթողուլ կախել վարագոյր 'ի խորանս, և առնել զայլ կարեւոր իրս 'ի բաժնի իւրեանց, եւ չթողուլ բանալ զպատուհանս և աւել ածել, և 'ի սմին ամի դանեցին զԼուսարարն Հայոց 'ի մաքրելն զեկեղեցին ըստ սովորութեան. ազգ արարին նոցա չլինիլ առիթ խռովութեան եւ վնասու, զի չէր աւելածութիւնն նորասահման ինչ. այլ նոքա մերժեցին թէ չիք ձեր սովորութիւն աւել ածելոյ անդ. Հայք ծանուցին զիրսն Դպրապետի դատարանի՝ և նա ծանոյց նոցա զիրաւունս բաժանորդութեան, այլ նոքա ոչ երբէք զիջան 'ի բանս նորա և ոչ կամէին զմաքրելն Հայոց զտեղին զայն, և սպառնային գրել 'ի Կոստանդինուպոլիս։

Դարձեալ անտի Դպրապետին քաջալերէր զՀայս աւել ածել և սրբել՝ և առնել զամենայն ինչ որպէս եւ նոքա ըստ իրաւանց բաժանորդութեան. թէպէտ կամէին Հայք իսպառ բառնալ զհետս խռովութեան օրինօք դատարանի, և 'ի լրումն ածել զթերի մնացեալն, սակայն բազում ծախուց և աշխատութեանց պէտս ունէր, վասն որոյ ծանուցին Ազգապետաց 'ի Կոստանդինուպոլիս վերստին առնուլ հրովարտակ վասն եկեղեցւոյն Բեթղեհէմի, զի ազատեսցին 'ի բռնութենէ Յունաց. և այս լինի յաւէտ յորժամ իւրաքանչիւր դրանց լիցի զոյդ բանալի՝ մին Հայոց և մին Յունաց, և յեկեղեցին և յԱյրին հաւասար նոցա ունիլ կանթեղս, պատկերս և զայլ ամենայն զարդս, զի յայտնի լիցի թէ բաժանորդ են Հայք 'ի նոյն տեղւոջ, ապա թէ ոչ յաւիտեանս տեւէ խռովութիւնն։ Խնդրեցին հրովարտակ արքունուստ վասն նորոգութեան Ս. Յակոբայ, Ծննդեան և այլ վանօրէից. զի չէր հնար առանց հրամանի դնել քար 'ի վերայ քարի. մանաւանդ վասն չի-